ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԳԱՅԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА
АРМЕНИИ
АРМАВИРСКАЯ ОБЛАСТЬ
ОБЩИНА ГАЙ

«03» մայիսի 2013 թ.
թիվ 57

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն Ղահրամանյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայի գյուղական համայնքի ղեկավարի 2013թվականի ապրիլ ամսվա ընթացքում ընդունած որոշումները:

Առդիր 10 թերթ:

Գայի գյուղական համայնքի ղեկավար՝ Ա. Մարկոսյան

4134-13
03 05 2013թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԳԱՅ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

« 11» ապրիլի 2013 թվականի

# Ո ր ո շ ու մ N 11

## ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԼԵՆՐՈՒՇԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ և հաշվի առնելով, որ շինությունը կառուցվել է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ կետով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի երկրորդ մասի 4-րդ կետով և հիմք ընդունելով Գայ համայնքի բնակիչ Հարություն Պետրոսյանի 2013 թվականի ապրիլի 11-ի դիմումը.

Ո ր ո շ ու մ եմ՝

1. Վերականգնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայի գյուղական համայնքի Մ. Գորկու 2 փողոց, տուն 46 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ քաղաքացի՝ Հարություն Լենդրուշի Պետրոսյանի (ծնված 03.05.1967թ.) գույքային իրավունքները՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը օրինական 0.12 հա հողամասի և կից ինքնակամ զբաղեցրած 0.03 հա հողամասի և օրինական հողամասի վրա կառուցված բնակելի տան և օժանդակ շենք – շինությունների նկատմամբ:

Բնակելի տունը և շենք-շինությունները բավարարում են «Հայաստանի Հանրապետության համայնքային վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1 և 2 հոդվածների պահանջները: Հողամասը չի ընդգրկված

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԳԱՅ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

« 15» ապրիլի 2013 թվականի

# Ո ր ո շ ու մ N 12

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԱՃՈՒՐԴՈՎ ՎԱՃԱՌՔԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ ենթակետով.

Ո ր ո շ ու մ եմ՝

1. Առաջարկել համայնքի ավագանուն համայնքի սեփականություն հանդիսացող ԳԱԶ-3507 մակնիշի, 433 US 29 պետ. համարանիշի գույքը 1 800 000 ՀՀ դրամ մեկնարկային գնով, որը գույքի գնահատված արժեքն է, աճուրդով վաճառելու:
2. Առաջարկել համայնքի ավագանուն համայնքի սեփականություն հանդիսացող ՄԵՐՍԵԴԵՍ ԲԵՆՑ C 180 մակնիշի, 039 LL 01 պետ. համարանիշի գույքը 840 000 ՀՀ դրամ մեկնարկային գնով, որը գույքի գնահատված արժեքն է, աճուրդով վաճառելու:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Գայի գյուղական համայնքի ղեկավար՝ Մարկոսյան

2013 թվական մայիսի 03-ին
գ. Գայ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԳԱՅ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

«17» ապրիլի 2013 թվականի

# Ո ր ո շ ու մ N 13

## ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի երկրորդ մասի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի թիվ 91 որոշմամբ և հիմք ընդունելով քաղաքացի Նշան Պետրոսյանի 2013 թվականի ապրիլի 17-ի դիմումը.

Ո ր ո շ ու մ եմ՝

1. Նշան Պետրոսյանին տալ թույլտվություն Արմավիրի մարզի Գայ համայնքի Խաղաղության փողոց, թիվ 9, կ004-033-092-004 հասցեում գտնվող սեփական տանը իրականացնելու շինարարական աշխատանքներ:
2. Շինարարական աշխատանքները իրականացնել մեկ տարվա ընթացքում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Գայի գյուղական համայնքի ղեկավար Ա. Մարկոսյան

2013 թվական
մայիսի 03-ին
գ. Գայ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԳԱՅ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

«26» ապրիլի 2013 թվականի

# Ո ր ո շ ու մ N 14

## ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի երկրորդ մասի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի թիվ 91 որոշմամբ և հիմք ընդունելով քաղաքացի Գոռ Դավթի Գասպարյանի 2013 թվականի ապրիլի 23-ի դիմումը.

Ո ր ո շ ու մ եմ՝

1. Արմավիրի մարզի Գայ համայնքի բնակիչ Գոռ Գասպարյանին տալ թույլտվություն Գայ համայնքի Սարյան 4 փողոց, թիվ 42 տնամերձ հողամասում (ԿԾ 04-033-106-021) կատարելու բնակելի տան շինարարական աշխատանքներ:
2. Շինարարական աշխատանքները իրականացնել երեք տարվա ընթացքում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Գայի գյուղական համայնքի ղեկավար՝ Մարկոսյան

2013 թվական
մայիսի 03-ին
գ. Գայ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԳԱՅ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

«30» ապրիլի 2013 թվականի

# Ո ր ո շ ու մ N 15

## ՀԱՍՑԵԱՎՈՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 16-րդ կետով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ.

Ո ր ո շ ու մ եմ՝

1. Արմավիրի մարզի Գայի գյուղական համայնքի վարչական տարածքում գտնվող բնակավայրերի հասարակական կառուցապատման 0.01572 հա հողատարածքին ԿԾ 04-033-0691 տալ հասցե՝ Երևանյան փողոց, թիվ 30/1:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Գայի գյուղական համայնքի ղեկավար՝ Ս. Մարկոսյան

2013 թվական
մայիսի 03-ին
գ. Գայ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԱՅԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ «22» մարտի 2013թ.-ի

# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ N 4

## ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշմամբ և «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23 հոդվածով.

Կ ա ր գ ա դ ր ու մ եմ՝

1. Արմավիրի մարզի Գայի գյուղական համայնքի 2013 թվականի տոների և միջոցառումների համար ծաղիկներ և ծաղկեպսակներ ձեռք բերելու նպատակով «ՃՀ ԱՊՁԲ-1/17» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի շրջանակներում գնումներ կատարելու նպատակով ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Ընթացակարգի հանձնաժողովի առաջին նիստը տեղի կունենա մարտի 26-ին ժամը 1230
3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Գայի գյուղական համայնքի ղեկավար՝ Մարկոսյան

2013 թվական
մայիսի 03-ին
գ. Գայ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Գայի գյուղական
համայնքի ղեկավարի 2013 թվականի
մարտի 22-ի N 4 կարգադրության

ՑՈՒՑԱԿ

Հանձնաժողովի նախագահ՝ - *Մարկոսյան Սեյրան (Գայ համայնքի ղեկավար)*

հանձնաժողովի քարտուղար՝ - Տերտերյան Անահիտ (համայնքի ղեկավարի օգնական)

1) հանձնաժողովի անդամ՝ - Թադևոսյան Աննա (գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար)

2) հանձնաժողովի անդամ՝ - Բոյաջյան Ժենիկ (աշխատակազմի առաջատար մասնագետ)

3) հանձնաժողովի անդամ՝ - Ինջիղուլյան Արփիկ (աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԱՅԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ « 19» մարտի 2013թ.-ի

# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ N 3

## ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշմամբ.

Կ ա ր գ ա դ ր ու մ եմ՝

1. Արմավիրի մարզի Գայի գյուղական համայնքի 2013 թվականի ծաղիկներ և ծաղկեպսակներ ձեռք բերելու համար ստեղծել պատասխանատու ստորաբաժանում՝ համաձայն հավելվածի:
2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Գայի գյուղական համայնքի ղեկավար՝ Ս. Մարկոսյան

2013 թվական
մայիսի 03-ին
գ. Գայ

*Հավելված*
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի [illegible] գյուղական
համայնքի ղեկավարի 2013 թվականի
մարտի 19-[illegible] № 3-[illegible]ության

ՑՈՒՑԱԿ

Պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝ - Քոչարյան Խուրշուդ (համայնքի ղեկավարի տեղակալ)

1) Անդամ՝ - Հարությունյան Տաթևիկ (աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ)

2) Անդամ՝ - Հակոբյան Գայանե (աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ)